ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«10» մարտի 2020թ. № 96

ԽՆԿՈՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՎՐԱ ԳՏՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑ ՊԱՐՍՊԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԿԱՌՈՒՅՑՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին պարբերությամբ, 4-րդ մասի 1-ին պարբերությամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված «Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգի» 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման» կարգի 33-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «ա» ենթակետով, 48-րդ կետով, հաշվի առնելով, որ Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող Խնկոյան փողոցի վրա գտնվող 06-006-0490-0041 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության հողամասերից 0,01346 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա 2006 թվականին կառուցված 6,50 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով պարսպի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, հիմք ընդունելով «Տեխպրոյեկտ» ՍՊԸ-ի եզրակացությունը, «Արսեն Իսահակյան Ռուդիկի» ԱՁ-ի կողմից տրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի սեփականության հանդիսացող Սպիտակ համայնքի Խնկոյան փողոցի վրա գտնվող 06-006-0490-0041 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության հողամասերից 0,01346 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա ինքնակամ կառուցված 6,50 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով պարիսպը ճանաչել օրինական:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի նկատմամբ ճանաչել Սպիտակ համայնքի սեփականության իրավունքը և տրամադրել «ք.Սպիտակ, Խնկոյան փողոց, թիվ 135» հասցեն:

3. Սույն որոշումը 5-օրյա ժամկետում տրամադրել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե՝ սահմանված կարգով պետական գրանցում կատարելու համար:

4. Իրավունքի պետական գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկություն ներկայացնել կառույցն իրականացրած Համլետ Ռաֆիկի Շահբազյանին (ծնված 10.01.1947թ.) օրինականացված կառույցը և դրա պահպանման և սպասարկման համար անհրաժեշտ հողամասը սահմանված կարգով և գներով սեփականության իրավունքով կամ վարձակալությամբ ձեռք բերելու համար:

5. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի վրա:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ.մարտի 10

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«10» մարտի 2020թ. № 97

ՌՈԶԱ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ մասի 1-ին կետով և 16-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286-Ն որոշման 3-րդ կետի «ը» ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, հաշվի առնելով, որ Ռոզա Վոլոդյայի Կիրակոսյանի ընտանիքին պատկանող, Թորոսյան փողոցի վրա գտնվող 06-006-0493-0007 կադաստրային ծածկագրով 0,03846 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածով սահմանված պահանջներին, ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, հիմք ընդունելով հողի հարկի վճարման անդորրագրերը, «Արտյոմ Սաքանյան» Ա/Ձ–ի կողմից տրամադրած անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը և Ռոզա Կիրակոսյանի, Անժելա Լյովայի Գունտաքճեանի, Դավիթ Լյովայի Հովսեփյանի ներկայացուցիչ Վանիկ Եփրեմի Հովսեփյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Վերականգնել հողհատկացման հիմքերը և օրենքի ուժով ճանաչել Ռոզա Վոլոդյայի Կիրակոսյանի (ծնված 19.06.1960թ.) և ընտանիքի՝
   1. Անժելա Լյովայի Գունտաքճեանի (ծնված 30.01.1983թ.) – աղջիկը,
   2. Դավիթ Լյովայի Հովսեփյանի (ծնված 13.10.1985թ.)- տղան,

ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը Սպիտակ համայնքի Թորոսյան փողոցի վրա գտնվող 0,03846 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքին տրամադրել «քաղաք Սպիտակ, Թորոսյան փողոց, թիվ 96» հասցեն:

3. Սույն որոշումից ծագող իրավունքը և տրամադրված հասցեն ենթակա են պետական գրանցման:

4. Սույն որոշման կատարման կազմակերպումը և հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի վրա:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. մարտի 10
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«10» մարտի 2020թ. № 98

ԱՐԹՈՒՐ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ մասի 1-ին կետով և 16-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286-Ն որոշման 3-րդ կետի «ը» ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, հաշվի առնելով, որ Արթուր Առաքելյանին պատկանող Խնկոյան փողոցի վրա գտնվող 06-006-0130-0039 կադաստրային ծածկագրով 0,05249 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածով սահմանված պահանջներին, ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, հիմք ընդունելով հողի հարկի վճարման անդորրագրերը, «Արտյոմ Սաքանյան» Ա/Ձ–ի կողմից տրամադրած անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը և Արթուր Առաքելյանի ներկայացուցիչ Մանուշ Մակսիմի Թումանյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Վերականգնել հողհատկացման հիմքերը և օրենքի ուժով ճանաչել Արթուր Առաքելյանի (ծնված 16.12.1961թ.) սեփականության իրավունքը Սպիտակ համայնքի Խնկոյան փողոցի վրա գտնվող 0,05249 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքին տրամադրել «քաղաք Սպիտակ, Խնկոյան փողոց, թիվ 25 » հասցեն:

3. Սույն որոշումից ծագող իրավունքը և տրամադրված հասցեն ենթակա են պետական գրանցման:

4. Սույն որոշման կատարման կազմակերպումը և հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի վրա:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. մարտի 10
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«10» մարտի 2020թ. № 99

ՍՊԻՏԱԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 1998 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 30-Ի ԹԻՎ 21 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, հաշվի առնելով, որ Սպիտակի քաղաքապետի 1998 թվականի հունվարի 30-ի թիվ 21 որոշման մեջ Եվգենյա Արտաշի Բաղդասարյանի անունը սխալմամբ գրվել է «Եվգենիա», հիմք ընդունելով Եվգենյա Արտաշի Բաղդասարյանի անձնագիրը և դիմումը՝ *որոշում եմ.*

1. Սպիտակի քաղաքապետի 1998 թվականի հունվարի 30-ի «Սպիտակ քաղաքի Շվեյցարական ԻՏ-1/1-3 թաղամասում բնակարան հատկացնելու մասին» թիվ 21 որոշման 1-ին կետում նշված «Եվգենիա» բառը փոխարինել «Եվգենյա» բառով:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. մարտի 10
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«10» մարտի 2020թ. № 100

ԱՐԱՅԻԿ ՌԱՖԻԿԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արայիկ Ռաֆիկի Պետրոսյանի դիմումը՝ Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատարի կողմից 2020 թվականի մարտի 5-ին կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն Սպիտակ համայնքի բնակիչ Արայիկ Ռաֆիկի Պետրոսյանի կողմից Սպիտակ համայնքին սեփականության իրավունքով պատկանող 06-006-0441-0006 կադաստրային ծածկագրով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության 0,00017 հա մակերեսով և Տեր-Սիմոնյան փողոցի վրա գտնվող 06-006-0441-0020 կադաստրային ծածկագրով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության արդյունաբերական օբյեկտների 0,002 հա մակերեսով հողամասերից հատվածներ ինքնակամ զավթելու և դրա հետևանքները չվերացնելու մասին, որը դրսևորվել է 2019 թվականին 7,23 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով շինություն կառուցելով:

Սպիտակ համայնքի ղեկավարի 2020 թվականի մարտի 5-ի թիվ 92 որոշմամբ նշանակվել է վարչական իրավախախտման գործի քննության օր, որի մասին Արայիկ Ռաֆիկի Պետրոսյանը պատշաճ կարգով ծանուցվել է, սակայն չի ներկայացել վարչական իրավախախտման գործի քննությանը:

Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատարի 2020 թվականի մարտի 5-ի վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությամբ, «Տեխպրոյեկտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2020 թվականի հունվարի 17-ի եզրակացությամբ, 2020 թվականի հունվարի 25-ի անշարժ գույքի չափագրման հաշվետվություններով, Արայիկ Ռաֆիկի Պետրոսյանի դիմումով հիմնավորվեց, որ Սպիտակ համայնքի բնակիչ Արայիկ Ռաֆիկի Պետրոսյանը ինքնակամ զավթել է Սպիտակ համայնքին սեփականության իրավունքով պատկանող 06-006-0441-0006 կադաստրային ծածկագրով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական

նպատակային նշանակության արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության 0,00017 հա մակերեսով և Տեր-Սիմոնյան փողոցի վրա գտնվող 06-006-0441-0020 կադաստրային ծածկագրով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության արդյունաբերական օբյեկտների 0,002 հա մակերեսով հողամասերից հատվածներ և չի վերացրել դրա հետևանքները, որը դրսևորվել է 2019 թվականին 7,23 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով շինություն կառուցելով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասով, 219[1]-րդ և 281-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով՝ *որոշում եմ.*

1. Արայիկ Ռաֆիկի Պետրոսյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ նրա նկատմամբ նշանակել տուգանք նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով՝ երկու հարյուր հազար ՀՀ դրամ:

2. Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության բաժնին՝ սույն որոշումը սահմանված կարգով և ժամկետում հանձնել Արայիկ Ռաֆիկի Պետրոսյանին:

3. Արայիկ Ռաֆիկի Պետրոսյանին՝ ընդունել ի գիտություն, որ սույն որոշմամբ նշանակված տուգանքը ենթակա է վճարման որոշումն ստանալու օրվանից ոչ ուշ, քան 15 օրվա ընթացքում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արայիկ Ռաֆիկի Պետրոսյանին իրազեկելուն հաջորդող օրվանից:

5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից վարչական կարգով երեսուն օրվա ընթացքում կամ դատական կարգով՝ երկու ամսվա ընթացքում:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. մարտի 10
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«10» մարտի 2020թ. № 101

ԱՆԱՀԻՏ ԱՇՐԱՖՅԱՆԻՆ ԺԱՌԱՆԳԱԲԱՐ ՓՈԽԱՆՑՎԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Դանիել Դավթի Դավթյանի մահից հետո Սպիտակ համայնքի Տեր-Սիմոնյան փողոցի վրա գտնվող անշարժ գույքի 1/2 մասը ըստ օրենքի ժառանգության իրավունքի 2018 թվականի ապրիլի 20-ի վկայագրի փոխանցվել է Անահիտ Սուրենի Աշրաֆյանին, սակայն անշարժ գույքին նախկինում հասցե չի տրամադրվել, հիմք ընդունելով Անահիտ Սուրենի Աշրաֆյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Անահիտ Սուրենի Աշրաֆյանին ժառանգաբար փոխանցված՝ Սպիտակ համայնքի Տեր-Սիմոնյան փողոցի վրա գտնվող անշարժ գույքին տրամադրել «քաղաք Սպիտակ, Տեր-Սիմոնյան փողոց, թիվ 159» հասցեն:
2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. մարտի 10
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

« 10 » մարտի 2020թ. № 102

ԾԱՂԿԱՅԻՆ ԿՈՄՊՈԶԻՑԻԱ ԵՎ ԾԱՂԻԿՆԵՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 46-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, հաշվի առնելով Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Անահիտ Գյուլազյանի զեկուցագիրը, 2011թ. մարտի 11-ին Ճապոնիայի ցունամիի, ինչպես նաև 1988թ. Սպիտակի երկրաշարժի զոհերի հիշատակին հարգանքի տուրք մատուցելու համար ծաղկային կոմպոզիցիա և ծաղիկներ ձեռք բերելու նպատակով՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2020 թվականի բյուջեի «Այլ մշակութային կազմակերպություններ» գործառական դասակարգման «Գրասենյակային նյութեր և հագուստ» տնտեսագիտական դասակարգման 4261 հոդվածից հատկացնել 5100 ՀՀ դրամ, «Հատուկ նպատակային այլ նյութեր» տնտեսագիտական դասակարգման 4269 հոդվածից՝ 8 000 ՀՀ դրամ:
2. Աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. մարտի _____
ք.Սպիտակ